

նաւորուած էր Բարակէն, եւ վերջինս անոր ներկայութեամբ իսկ բռնաբարած էր իր (Սահլի) մայրը, քոյրը եւ կիները»: Ասիկա անարկու եւ աններեւի ոճեր մըն էր տոհմիկ Հայ իշխանի մը դէմ կատարուած եւ բնական է որ Սահլ երբեք պիտի չներէր Բարակին:

Փնտռենք թէ ե՛րբ կրնար կատարուած ըլլալ Սահլի Բարակէն կալանաւորուիլը:

Կաղանկատուացի պաշտօնապէս Բարակի Հայաղուանք եւ Սիւնիք մտնելը կը նըշանակէ 821ին: «Ի նոյն ամի ասպատակաց Սեւադայ՝ աշխարհաւերն Տաճիկ, որոյ Աւառանշան անուն ճանաչէր, ի սահմանս Հայոց եւ յաւարի առեալ զաշխարհն ամենայն դառնայ ի Սիւնիս, եւ ամբանայ ի Բերդատեղի աւանին Շաղատու, որ է ի դաւառին Ծղկաց: Եւ Վասակ Սիւնեաց տէր անեալ զԲարան ի Պարսից՝ եհար ըզնոսս եւ արար փախտական. եւ Սիւնեաց տէրն, ի նմին ամի վախճանեցաւ. եւ էառ Բարան զգուտորն Վասակայ Սիւնեաց տեան ի կնութիւն» (էջ 374-5):

Բարակ այսպէս տիրացաւ Սիւնեաց Վասակի երկիրներուն. հաւանաբար դէպքերու շարքով 822ին Բարակ տէր դարձաւ երկրին: Սակայն կ'երեւի թէ Սիւնիք հանդարտօրէն չենթարկուեցաւ այս օտար բռնակալութեան: Միայն այս առեն Բարակ կրնար Սահլը կալանաւորել եւ ընտանիքը պղծել: Կաղանկատուացի կը շարունակէ պատմելով. Յետ այսորիկ անհրամանակատար եղև դաւառն Բաղաց՝ յանօրէն Բարանայ. եւ ձլ նա ի Պարսից եւ էառ աւերեաց զերկիրն եւ ի սուր սուսերի էարկ զկանայս եւ զմանկունս Բաղաց: Եւ անտի ի միւս տարին էանց Բարան ի դաւառն Գեղարքունի եւ էարկ ի սուր զրնակիչն ոչիս իրրեւ տասն եւ հինգ հազար, եւ զմեծ Մաքենացուց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն ջրաղացն եւ այլ ոչ ինչ. եւ էր թիւն Հայոց երկու հարիւր եօթանասուն եւ վեց» (Կաղանկատուացի, էջ 375 եւ Օրբէլեան):

Բարակ Սիւնեաց տիրելէ վերջ՝ կ'երեւի

թէ Ատրպատական քաղուեցաւ: Սակայն Սիւնեցիք հանդարտ չմնացին եւ ըմբոստացան: Բարակ վերադարձաւ եւ Բաղաց դաւառ եւ Գեղարքունիքը աւարի եւ կոտորածի ենթարկեց, տասնեակ հազարներ բնակչութեանն առ հասարակ սրախողխող ընելով: Քանզեց նոյնիսկ Մաքենացուց մայրավանքը որ Կաղանկատուացիէ մայրաքաղաք կոչուած կը գտնենք: Բարեբախտաբար վանականները երկու խումբերով կրնան փախելիլ ու ազատիլ: Կաղանկատուացի 827ը կը հասցնէ կատարուած աւերումներուն թուականը:

Հաւանաբար կարճ ժամանակ մը արիւնշաղախ խաղաղութիւն մը տիրեց Սիւնեաց աշխարհին: Սակայն յաջորդ տարին, 829ին, ալ-Մամուն Բարակի դէմ զրկեց մեծ արարական բանակ մը՝ հրամանատարութեամբ Մուհամատ իպն Հիւմայիտ ալ-Տուսին (Կաղանկատուացիի Տաւուսը):

Ասկէ հաւանաբար քաջաբերուած՝ նոր ապստամբութիւն մը կը սկսի Սիւնեաց մէջ: Կաղանկատուացի կը զրէ՛. «Եւ յետ երկուց ամաց (829-30) ճհար Բարան ըզՏաւուսին եւ հալածական արար անձինս իրրու հարիւր եւ յիսուն հազար: Եւ ի միւսում տարին եհար Բարան զԱրբահիմ զորդին Ղեթայ (Իպրահիմ իպն ալ-Լայդն): Ի նմին ամի դաւաճանողքն ի սէր եւ ի խաղաղութիւն, որոց անուանք Դաւոն եւ Շապուհ ճանաչէր, սպանին զՍտեփաննոս զկոչեցեալն Արլասադ, որ էածն զԲարան եւ ճհար զԲաղացիսն» (էջ 375-6):

Դաւոն եւ Շապուհ ապստամբութիւնը կը սկսին նախ վրէժ առնելով Բաղաց դաւառի կոտորման՝ Բարակին օժանդակ Ստեփաննոս զկոչեցեալն Արլասադը սպաննելով: Պիտի տեսնենք որ այս Ստեփաննոս - Արլասադը Եռանշահի տոհմէն էր: Բարակի առաջնորդը եղած կը թուի Բաղասական դաւառի ապստամբութիւնը ճգմելու առեն, որմէ վերջ Գեղարքունիքն ալ զո՛հ զնաց Բարակի կատաղութեան: